բարիքների ցանկությունից: Նա գաղափարի մարդ է: Նա գաղտնիք ունի: Այդ գաղտնիքն անհավատությունն է Աստծու հանդեպ, անհավատությունը՝ աշխարհի Իմաստի հանդեպ, հանուն որի արժեք, որ մարդիկ տառապեն: Կորցնելով հավատքը՝ Մեծ Հավատաքննիչն զգաց, որ մարդկության մի հսկայական զանգված ի գորու չէ տանելու Բերիստոսով բացահայտված ազատության լուծը: Ազատության ճանապարհը դժվարին է, տառապալից. ողբերգական ճանապարհ է: Այն հերոսություն է պահանջում: Այն ուժից վեր է մի այլպիսի չնչին, խեղճ արարածի համար, ինչպիսին մարդն է: Մեծ Հավատաքննիչը չի հավատում Աստծուն, բայց նա չի հավատում նաեւ մարդուն: Չէ՞ որ դա միեւնոյն հավատքի երկու կողմերն են: Աստծու հանդեպ հավատքը կորցնելով՝ այլեւս չի կարելի հավատալ մարդուն: Բերիստոնությունը ոչ միայն հավատք է պահանջում առ Աստված, այլեւ հավատք առ մարդը: Բերիստոնությունն Աստվածամարդկային կրոն է: Մեծ Հավատաքննիչն ամենից առաջ ժխտում է Աստվածամարդկության գաղափարը, աստվածային եւ մարդկային սկիզբների մերձությունն ու միությունը՝ ազատության մեջ: Մարդը չի դիմանում իր հոգեւոր ուժերի, իր հոգեւոր ազատության, իր՝ վերին կյանքի կոչվածության մեծ փորձությունը: Նրա ուժերի այդ փորձությունը մարդու հանդեպ մեծ հարգանքի արտահայտությունն էր, նրա գերագույն հոգեւոր բնության ճանաչումը: Մարդու շատ բան է պահանջվում, քանի որ նա կոչված է մի մեծ բանի: Բայց մարդը հրաժարվում է քրիստոնեական ազատությունից, բարու եւ չարի միջեւ ընտրությունից: «Ինչ»՝ համար ճանաչել այդ աստատանալական բարին ու չարը, երբ այն այդքան թանկ արժեք: Մարդը չի կարող տանել իր եւ այլոց տառապանքը, իսկ առանց տառապանքի՝ անհնար է ազատությունը, անհնար է բարու եւ չարի իմացությունը: Մարդու առջեւ երկնքնորանց է դրվում՝ ազատություն կամ երջանկու-

թյուն, բարեկեցություն եւ կյանքի կարգավորում, ազատություն՝ տառապանքով հանդերձ, կամ երջանկություն՝ առանց ազատության: Եվ մարդկանց հսկայական մեծամասնությունը երկրորդ ճանապարհով է ընթանում: Առաջին ճանապարհը սակավաթիվ ընտրյալների ճանապարհն է: Մարդը հրաժարվում է Աստծու, անմահության եւ ազատության մեծ գաղափարներից, եւ նրա վրա իշխում են անաստվածային կեղծ սերը մարդկանց հանդեպ, կեղծ կարեկցանքը, երկրի վրա առանց Աստծու համընդհանուր բարոյություն կառուցելու ծարավը: Մեծ Հավատաքննիչն Աստծու դեմ ըմբոստացավ՝ հանուն մարդու, հանուն ամենափոքր մարդու, հենց այն նույն մարդու, որին նա նույնպես չի հավատում, ինչպես Աստծուն: Եվ դա արտասովոր կերպով խոր է Սովորաբար մարդկանցից երկրային բերեկեցության կազմակերպման ամբողջությամբ տրվում են նրանք, ովքեր չեն հավատում, որ մարդը նախասահմանված է գերագույն, աստվածային կյանքի համար: Ընթերցողը եւ ինքնասահմանված մարդն է «Եվկլիդեսի մտածողությունը» փորձում է ավելի լավ աշխարհակարգ կառուցել, քան Աստծու ստեղծածն է: Աստված ստեղծել է տառապանքով լեցուն աշխարհակարգ: Նա մարդու վրա է դրել ազատության եւ պատասխանատվության անտանելի լուծը: «Եվկլիդեսի միտքը» կկառուցի մի աշխարհակարգ, որում այլեւս չեն լինի այդպիսի տառապանքներ եւ պատասխանատվություն, բայց չի լինի նաեւ ազատություն: «Եվկլիդեսի միտքը» անխուսափելիորեն պետք է հանգի Մեծ Հավատաքննիչի համակարգին, այսինքն՝ անհրաժեշտության սկզբունքների վրա հիմնված մրջևնոցի ստեղծմանը, ազատության ոգու ոչնչացմանը: Այս թեման ավելի վաղ՝ «Նոթեր ընդհանրական», «Դեռերը» գործերում դրվում էր Շիգայովի եւ Դ. Վերխովենսկու առջեւ եւ լուծվում է «Մեծ Հավատաքննիչի մասին առասպելում»:

Շարունակությունը՝ էջ 7

## ԱՍՆԱՎՐԱՎԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՃԻՆԵՉՍ

Հափի ու ձեռի մեջ: Փորձենք հասկանալ, թե որոնք են այդ հափի ու ձեռի, որոնց մասին մեր որոշ լրագրողներ շատ արդու պատկերացում ունեն: Նախ եւ առաջ նշենք, որ մեր մարդկին լեզուն աշխարհի գեղեցիկ ու հարուստ լեզուներից է եւ լիարժեք հնարավորություն է ընձեռնում յուրաքանչյուրիս միեւնոյն միտքն արտահայտել շատ տարբեր եղանակներով: Բերենք մի քանի պարզ օրինակ. եթե մարդն ուզում է ասել, որ որեւէ մեկը կույր է, բնավ պարտադիր չէ նրան կույր անվանել կամ էլ ավելի կույր ասել կիրառել: Տվյալ դեպքում բավական է «տեսողական խնդիր ունեցող»-ը: Եթե որեւէ մեկը ուզում էք մատնանշել որեւէ մեկի կողմ լինելու փաստը, բոլորովին պարտադիր չէ նրան «կար» անվանել: Ավելի նորմալ կա է «տեղաշարժման խնդիր ունեցող»-ը: Իսկ հաշվառումների մասին ընդհանրապես խոսելիս կարող ենք ասել «սահմանափակ հնարավորությունների տեր մարդիկ»: Եթե որեւէ տեսնում էք, որ որեւէ մարդ գուրկ է բավարար անելիկոցի եւ գաղափարական կարողություններից, կարիք չկա

նրան անվանել «տկարամիտ», կամ օգտագործել գոեհիկ այլ բառեր: Այս դեպքում կարելի է պարզապես ասել, որ «տվյալ անձն առանձնապես չի փայլում իր խնդիրներով կարողություններով»: Անվաճից կարող ենք մի պարզ տրամաբանական եզրակացության հանգել. ցանկության դեպքում ցանկացած մարդ, ցանկացած լրագրող կարող է շատ բան ասել, բայց միեւնոյն ժամանակ չարորակացնել դիմացինի արժանապատվությունը, չստեղծացնել նրան, այսպիսով մնալ տարրական պարկեշտության եւ բարեկրթության սահմաններում: Երբեմն կարելի է, թե մարդն ինչ է ասում, կարելի է, թե ինչպես է նա արտահայտում իր մտքերը:

Առանձին քննարկման թեմա է հեռուստատեսային եթերային խնդիրը: Սա իսկապես մեր օրերում խնդիր է դարձել: Ժամանակակից հեռուստատեսությամբ կարելի է լսել այնպիսի բառեր եւ արտահայտություններ, որ բարեկրթ մարդը նույնիսկ փողոցում կամ իր ընտանիքում չի բարձրաձայնի: Այժմ ոմանք կասեն, թե հեռուստատեսային եւ ընդհանրապես զանգվածային լրատվա-

միջոցների եթերային մակարդակը ցածր է, քանի որ մեր հասարակության զգալի մասին դա դուր է գալիս: Այստեղ, իհարկե, ճշմարտության մասնաբաժին կա, սակայն ՉԼՍ-ները չեն կարող եւ իրավունք չունեն հասարակությանը հրամցնել այն ամենը, ինչն այդ հասարակությունը ցանկանում է տեսնել ու լսել: Բանն այն է, որ հասարակության մեջ կան մարդիկ, ովքեր ունեն հանցավոր հակումներ ունենում են իրենց շեղումներ, այդ թվում՝ այլասերումներ, կամ էլ իրենց ելույթներ անկիրթ են, գոեհիկ եւ կտի: Մի՞թե սա նշանակում է, որ ՉԼՍ-ները պարտավոր են բավարարել հասարակական այս բոլոր տարրերի ցածր եւ արատավոր պահանջները: Անշուշտ՝ ոչ: Աշխարհի առաջադեմ եւ ազատ համարվող որոշ երկրներում վարդապետական այս բոլոր տարրերի ցածր եւ արատավոր պահանջները չեն հարգում: Նախապես, իհարկե, ընդ որում՝ նաեւ Հայաստանում, բնավ ոչ: Մեր ՉԼՍ-ներով կարելի է լսել ու տեսնել ինչ ասես եւ երբ ասես: Այսպեսից հետո թերեւ չարժեք գարնանալ, թե ինչու



ՉԼՍ-ների խղճին է, առաջին հերթին,՝ հեռուստատեսության եւ համացանցի, որոնք իրենց ձեռով ու քաղաքականությամբ ոչ թե ազատ, այլ ամենաթուղ եւ դարձել:

գաղափարները մեծազույն շնորհի է, եւ այդ շնորհի պատճառով միայն բանաձայնեցին:

Տիգրան ՄԱՆՈՒՅԱՆ  
Բանասիրական գիտ. թեկնածու

# ՀՈՎԻՎՆ ՈՒ ՆՐԱ ՀՈՏԷ

## ԱՐԴԱՐՈՒԹՅՈՒՆ

**Ձեր հարցերին դասասխատում է Ղազար Բահանա ՊԵՏՐՈՍՅԱՆԸ**  
**Ձեր անունից հարցերն ուղղում է Աճառյա ԽԱՉԱՏՐՅԱՆԸ**

- Տե՛ր հայր, ըստ Եկեղեցու հայրերի դասասխատման՝ մարդկային առաքելությունների շարքում չորրորդն արդարությունն է։ Աստծո գլխավոր հատկանիշներից մեկն է արդարությունը։ Աստված այս եզրի կատարյալ մարմնավորումն է։ Ամենաարդար՝ ասելով՝ մենք հենց Աստծուն էլ հասկանում ենք... Սակայն ինչո՞ւ մեզանում այնքան շատ են անարդարությունները, եթե Աստված արդարադատ է։

- Այո՛, Աստված Ինքն արդարության կատարելատիպն է։ Աստված արդար է։ Նա մարդուն ազատ կամք է տվել, որով էլ մարդն ընտրում է բարին կամ չարը։ Մեր խախտողները դրախտում ունենին արդարությունը պահելու հրահանգ։ Նրանք պիտի հեռու մնային չարի եւ բարու գիտության ծաղից։ Սակայն անհնազանդ գտնվեցին, պատվիրանազանց եղան, արդարությունը թյուրվեց։ Մարդու ազատ կամքի դրսեւորման արդյունք են անարդարություններն ու անօրենությունները։ Այսպիսով՝ Աստված մեզ ցույց է տվել փրկության ճշմարիտ ուղին։ Մարդն է ընտրում, թե որ ճանապարհով եւ ուր կընթանա։

- Կարելի՞ է ասել, որ անարդարության շատ տեսակներ ծնվում, զարգանում են այն պատճառով, որ հիմքում լինում է Արարչի դեռ ստանձնելու մոլորությունը։

- Դա մոլորություններից մեծագույնն է, որից ծնվեցին բոլոր մոլորությունները։ Յիշե՛ք Արուսյակի ապստամբությունը երկրում (յո՛ւն Եսայի ԺՂ 12-15)։ Վերջինս ուզեց Աստծու տեղը լինել, որն արդարության խեղաթյուրում էր, սակայն պատժվեց արդարադատ Աստծոց, արտաքսվեց երկրից, դարձավ սատանա, թշնամի եւ հակառակորդ։ Արդարությունը վերականգնվեց։ Եթե սատանան չընկղմեր իր Արարչի դեմ, չարտաքսվեր երկրից, չէր խաբի մեր խախտողներին դրախտում՝ դառնալով նրանց արտաքսման ու մարդկային ցեղի կորստյան պատճառը։ Մարդը դարձավ մահկանացու, սակայն Բրիստո-

սի մարդեղության մե փրկագործությամբ ազատագրվեց մեղքի եւ մահվան դատապարտությունից։

- «Արդար», «արդարություն» բառերը գոնե աշխարհիկ մտածողության մեջ հաճախ ենթադրում են «դատաւար», «դատե՛ք» տրամաբանական թվաբոլ եզրեր։ Դոգետոր դաշտում էլ այս երեւույթն առկա է։

- Մեծագույն Դատավորը, արդարության պահպանն Աստված Ինքն է։ Գիտենք, որ Ահեղ դատաստան պիտի լինի, ինչպես Սուրբ Գիրքն է ասում։ Աստված սահմանել է մի օր, երբ բոլոր Ննջեցյալները հարություն պիտի առնեն եւ կանգնեն Աստծո Ահեղ դատաստանի առաջ։ Դեհ այդ դատաստանով էլ վերականգնվում է արդարությունը։ Աստված մարդուն փրկության տարբեր միջոցներ տվեց, օրինակ՝ խիղճը, որն Աստծո ծային է մարդու մեջ։ Դատաստանի ժամանակ պիտի հայտնվի աստվածային արդարությունը, եւ դատապարտվի մարդկային ապերախությունը։ Ահեղ դատաստանի ժամանակ Բրիստոսը կմերկացնի մեր բոլոր արարքները, մեր ողջ կյանքը, մեր լեզուն կդառնա մեր դատավորը, ծածկվելու տեղ չի լինելու, արդարությունը պարզաճակատ երեւալու է։

- Փաստորեն՝ այս ժամանակավոր կյանքի ընթացքում բրիստոսյան իր անարդարությունների եւ անխաղճությունների դիմաց հանդերձալով պիտի վարձատրվի՝ եւ վայելի արդարությունն Աստծո արքայության մեջ։

- Այո՛, մեր սուրբ վարդապետները բոլոր դարերում այդ են ուսուցանել՝ հիմնվելով Ավետարանի վրա։ Սբ Դիդակոս առաքյալն ասում է, որ եթե մեղք հանիրավի տառապանքի է ենթարկվում եւ բարի խղճմտանքով առ Աստված դիմանում, շնորհիւ ու վարձք կստանա։ Բայց շատերը տառապում են մեղք գործելու պատճառով։ Սա այլ պարագա է։ Նաեւ լինում են դեպքեր, երբ մարդուն հանիրավի են դատում, զուր դատապարտում։ Այս դեպքում



այդ դատաստանը ենթարկվելու է ահեղ Դատավորի դատին. մեղավորները պատժվելու են։

- Աստվածաշնչում բազում մարգարեների, Նախատակներից, Նաեւ Եկեղեցու կողմից սրբազան անձանցից միայն մի քանիսն են արժանացել արդար կոչվելու՝ Նոյ, Աբրահամ, Դանիել, Դոք, Դովհաննես Մկրտիչ։ Մի՞թե արդարությունն ավելի բարձր բարոյական եզր է, քան մյուս առաքելությունների՝ սրբություն, խոնարհություն եւ այլն...

- Արդար կոչվելն այլ եզր է, բացարձակ արդարությունը՝ այլ։ Սբ Դոդոս առաքյալն ասում է. «Եթե Աստված արդարացրեց, ո՞վ կարող է մեղադրել»։ Տեսե՛ք. երեք մարդ դատապարտվում է խաչելության. մեղք հավիտյան օրինակ Աստված է, մյուս երկուսը՝ ավագանիներ, որոնցից մեկն անգամ մահվան ժամին չի դադարում մեղք ու պղծություն գործելուց։ Մյուսը Նախատում է նրան՝ հիշեցնելով, որ իրենք արդարացի են պատմվում, միևնույն Բրիստոսն անմեղ է։ Եվ մեր Տերն արդարացում է աջակողմյան ավագանի՝ ասելով. «Այսօր Իմ հետ դրախտում կլինես»։ Իսկ անարդարը դրախտը ժառանգել չի կարող։ Արդարությունը Բրիստոսով է լինում,

հետեւաբար, եթե բացարձակ ճշմարտության տեսանկյունից դիտարկենք, երկրագնդի վրա, Բրիստոսից բացի, ոչ ոք բացարձակ արդար չէ։ Բայց բոլոր սրբերն էլ արդար են։

- Մեր Տերը Մատթեոսի Ավետարանում ասում է. «Եթե ձեր արդարությունն ավելի չլինի, քան օրենսգետներին եւ փարիսեցիներին, երկնքի արքայությունն չեք մտնի»։ Ինչպե՞ս հասկանալ Տիրոջ խոսքը։

- Վերածեալեկրպես Տիրոջ խոսքերը, եթե Մայր Եկեղեցու հետեւորդների արդարությունն արանդավորների արդարությունից ավելի չլինի, թևակ երկնք չեն մտնի։

- Տե՛ր հայր, այսպիսի հայտնի ասույթ կա. «Արդարությունը հաճախ հիվանդանում է, սակայն չի մեռնում»։ Սա արդո՞րք արդարության հաղթանակի հանդեպ մարդու հավիտենական հույսը չէ։

- Սոցիոմոն Իմաստունն ասում է. «Երիտասարդ էի եւ ծերացա, սակայն արդարի որդուն հաց մուրալիս չտեսա»։ «Երիտասարդ էի եւ ծերացա» արտահայտության մեջ կա կյանքի փորձ, որի մեջ արդարությունն իր գորությունը փաստել է հաստատել է։ 1920-30-ական թվականներին, երբ համատարած քանդում էին եկեղեցիները, մարդիկ մտածում էին, որ դա քրիստոնեության վերջն է, բայց, ինչպես տեսանք, արդարությունն աստիճանաբար հաղթանակեց։ Ժողովուրդը տեսնում էր, թե ինչպես է այս կյանքում պատուհասվում եկեղեցու խաչք վրայ գցողը, դեռ անվախճան հավիտենական դատաստանն է՝ գլխին կախված։ Այսօր մենք դարձյալ վերադարձանք Մայր Եկեղեցու փրկել, որից բռնի կերպով մեզ փորձեցին խլել։ Բրիստոսյայի հույսը միայն այս կյանքի մեջ է։ Եթե Նույնիսկ այս կյանքի մեջ էլ այդ հաղթանակը չառնես, ապա դրա վարձքը պիտի ստանա Ահեղ դատաստանի ժամանակ։ Առաքյալն ասում է, որ թշվառ է այն մարդը, ում հույսը միայն այս կյանքի համար է, բայց երանք՝ նրան, ում հույսը մեռելներից հարույթություն առած Բրիստոսն է, հավիտենական կյանքը։ Դետեւաբար մեր հույսը երբեք չի կորցում՝ Նույնիսկ մահվան ժամանակ։ Այն մեզ անվախճան հավիտենական է հասցնում, որտեղ արդարությունն է թագավորում։



Դեռեւս 1982 թ., երբ աշխատում էի Զայաստանի նկարիչների միությունում, ինձ բախտ վիճակվեց կազմակերպելու հայ կերպարվեստի ամենախրեւատիպ նկարիչներից մեկի՝ Կոլոյր Գալստյանի առաջին անհատական ցուցահանդեսը։ Մասենադարանի մոտ գտնվող նրա փոքրիկ, մեկ սենյականոց բնակարանում շարժվելու տեղ չկար. ամենուր նկարներ էին, իրար վրա դադապված գրաֆիկական թերթեր։ Դեշտությամբ ընտրեցիք ցուցահանդեսի համար Նախատեսված գեղանկար գործերի քանակը, սակայն գրաֆիկան դարձավ խնդիր։ Բանն այն էր, որ այդ հսկայածավալ թերթերը նկարված էին Նաեւ «չըրքերեսին»։ Ես չակերտների մեջ եմ առնում այս բառը, բանդի դժվար էր ասել, թե որն էր երեսը եւ որն ըրքերեսը. երկու երեսներին էլ բարձրորակ կոմպոզի-

## ԵՐԵՎՈՒՅԹ, ՈՐ ԱՐՈՒՅԹ ԵՐ ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԿՐՈՒԹՅԱՆ

ցիաներ էին։ Իսկ ամենախոյունն այն էր, որ այդ թերթերի երեսների պատկերների թանձրաստվեր գծերը շողարձակում էին մեկը մյուսի տակից՝ լողորեն խախտելով հորինվածքների արտահայտչազոծերի հստակությունը։ Չարանքս ցալվի վերածվեց, երբ Նկարիչը բացատրեց պատճառը. «Շատ հաճախ, երբ թուղթ չէի ունենում, իսկ նկարելու պահանջը խեղդում էր, ստիպված էի լինում նկարել արդեն նկարված թերթերի շրջերեսներին»։ ու մի տեսակ մեղավոր-մեղավոր նայեց երեսիս եւ ապա շարունակեց. «Թերթնեզանում սովորելու տարիներին ավելի վատ վիճակ էր. պատերներ, որ, առթան էինք, ոչինչ չունեին, իսկ ես ոչ միայն նկարել էի ուզում, այլեւ մտքեւս, պարունելւս, խոհեւս պատկերելու կերպը չէի գտնում. ունեցածս ու գիտեցածս ինձ չէին գոհացնում, իսկ արտահայտվելու իմ «խոսքերը» չէի կարողանում գտնել։ Ներսուսն քառս էր, կատարյալ դժոքը, իսկ դուրս գալու ելքեր չէի գտնում։ Այն, ինչ կար, ինչ չէր, իսկ ուրիշների գտած ճանապարհներն ինձ ոչ մի տեղ չէին տանելու, ու ընկա հիվանդանալ...»։ Ես միջոց այսօր չեմ հասկանում, թե ինչու Նա այդ ամենը պատմեց ինձ։ Թեպետ խոստովանության պատճառը չգիտեմ, բայց անպիշ շնորհակալ եմ նրան՝ նման թանկ վտահույթյան համար։

Եվ ահա եկավ ցուցահանդեսի եզրագիծիայի ժամանակը։ Նայեցի դալիճի

հատակով մեկ փոփած նկարներին ու խուճապի մատնվեցի. նման բան ինձ հետ չէր կատարվել Նույնիսկ այն ժամանակ, երբ առաջին անգամ էի Էքսպոզիցիա անում։ Ամփոփապես գանգեցի Դեկրիկ Իգիթյանին եւ խնորեցի ինձ օգնել։ Նա ոչ միայն համաձայնեց անմիջապես գալ, այլեւ քաժանիրանքով վրա բերեց. «Դու Կոլոյրի հետ գործ ունես եւ ոչ թե Մարկոսի կամ Դեկրոսի»։ Երբ արդեն ցուցահանդեսը պատրաստ էր, ես դրերի մոտ կանգնած նայեցի դալիճին եւ ինձ թվաց, որ դիմացի պատը, որտեղ կողք կողքի կախել էինք նկարչի միայն ինքնադիմանկարները, հետ ու առաջ է շարժվում եւ ուր որ է պիտի փուլ գա։ Դա երկրաշարժին համարժեք ներքին մի երեքդիս էր, որ ճառագում էր նկարչի ինքնադիմանկարներից։ Ես անմիջապես հասկացա, թե ինչ «քառսի» են թե ինչ «եղքի» մասին էր խոսում Կոլոյր Գալստյան նկարիչը։

Կոլոյր Եգեկիեի Գալստյանը ծնվել է 1924 թ. մարտի 3-ին Երեւանում։ 1943-1947 թթ. սովորել է Փ. Թերթմեզյանի անվան գեղարվեստական ուսումնարանում՝ հայ կերպարվեստի սքանչելի վարպետներից մեկի՝ Վահրամ Գայֆեճյանի դասարանում։ Ի դեպ, հենց Գայֆեճյանի պնդմամբ էլ Կոլոյրը ոչ թե առաջին, այլ միանգամից հաճախել է երկրորդ կուրս։ 1947 թ., երբ աշխատում էր դիպլոմային գործի վրա, կարող էր վատանում է հոգեկան վիճակը, եւ նրան տեղափոխում են հիվանդանոց։ «Քառսն» իր գործն անում է... Առողջանալուց հետո, թե «քառսից» իր արտահայտման կերպը՝ «եղքը» գտնե-

լուց հետո՝ 1959 թ., պաշտպանում է դիպլոմայինը. «Մառնե Ծախող կինը» կտավով եւ անմիջապես ընդունվում էրեւանի գեղարվեստաթատերական ինստիտուտ։ Է. Խաթեկյանի դառաւան եւ ավարտում այն 1964 թվականին։ Այս առումով Կոլոյրի բախտը բերել էր. Ե.Կ Գայֆեճյանը, Ե.Կ Խաթեկյանը, մեծ նկարիչներ լինելուց զատ, Նաեւ սքանչելի ու հմուտ անկախարժեքներ էին. նրանցից ոչ մեկն իրենք չէր պարտադրում ուսանողին, այլ փորձում էին վեր հանել ապագա նկարչի սեփականը եւ կյանքի ուղեգիր տալ եւ մի ինքնատիպ ու չլրկնվող անհատականության։

1962 թ., երբ դեռ ուսանող էր, սկսում է մասնակցել հանրապետական, ապա Նաեւ համամիութենական ցուցահանդեսներին՝ սկզբում գործընկերների, ապա Նաեւ արվեստասեր հանրության շրջանում մեծ հետաքրքրություն առաջացնելով իր գործերի նկատմամբ։ Մարտիրոս Մալախյանի պես խոսքերի մեջ ժպտ կարգադրող նկարչի գործերը դիտելուց հետո պիտի հորդորեր, թե Կոլոյրը «երեսույթ» է՝ արժանի հատուն ուշադրության։ Այն, որ Կոլոյրը հիփոպի երեսույթ էր մեր կերպարվեստում, ժամանակից ցույց տվեց, բայց որ արժանի էր հատուն ուշադրության, ցավոք, տեղի չունեցավ։ Ո՛չ Նկարիչների միության, ո՛չ էլ պետական իշխանավորների կողմից արժանավայել չգնահատվեց։ Ինչ արած՝ մեծերի բախտի անխիղ ոչ թե իրենց ժամանակի, այլ ժամանակների միջով է անցնում։

Շարունակությունը՝ էջ 8


**Շատ է մեզ ստանալ բշմամի, զեղբարս մեր մի՛ արասցուք մեզ բշմամի. այլ փութասցուք հաշտեցուցանել ընդ մեզ...**

Յովհան Մանդակունու հայրապետության երկրորդ շրջանի մասին սակավ տեղեկություններ կան. Ղազար Փարպեցիի հայածանցների պատճառով չի կարողանում նկարագրել կաթողիկոսության այս շրջանը եւ իր Պատմությունն ավարտում է Պայոց Չարապետի ատենաբանությամբ՝ խոսված Վահանի մարզպանության առիթով (տե՛ս «Ղազարապ Փարպեցու Պատմությունը Պայոց. Թուրք առ Վահան Մամիկոնեան», Տիգրիս, 1904, էջ 434-449):

Պարսից Պերոզ արքայի մահվանից՝ 484 թ. հետո Չարապետն աղադրություն է հաստատվում. Յովհան Մանդակունիի հոգեւոր ու վարչական գործունեություն է ծավալում (տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան, Ազգապատմ., հտ. Ա, Ս. Էջմիածին, 2001, էջ 549**): Չարապետին վերադրվող բարեկարգություններից առաջինը կաթողիկոսական աթոռի տեղափոխությունն է: Չարապետական աթոռի՝ Վաղարշապատից՝ Դվին տեղափոխման ստույգ ժամանակաշրջանի վերաբերյալ հայագիտության մեջ առկա են հակասական, իրարամերձ կարծիքներ ու տեսակետներ: Պատմագիրները եւ ուսումնասիրողները Ե դարում տեղի ունեցած այս պատմական կարեւորագույն իրադարձությունը վերագրում են Մելիտե Ա Մանազկերտցի (452-456 թթ.), Գլուս Ա Արաւելագի (461-478 թթ.) եւ Յովհաննես Ա Մանդակունի (478-490 թթ.) հայրապետներին, ինչը տարակարծությունների տեղիք է տվել:

Յովհան Մանդակունի կաթողիկոսն զբաղվում է նաեւ եկեղեցական կանոնների մշակմամբ. այդ են վկայում նրա անունով մեզ հասած ինը կանոնները, որոնք տեղ են գտել Կանոնագրքում (տե՛ս «Գիրք կանոնաց եւ դատաստանի», Կ. Պոլիս, 1831, էջ 122): Գոյություն ունի նաեւ տասներորդ կանոնը, որն առավել ընդարձակ է (տե՛ս *անդ.*, էջ 123): Վերոնշյալ կանոնների առանձնահատուկ տեղ են զբաղեցնում Կանոնագրքում, որանք վերաբերում են ծիսական խնդիրներին, պահիքն ու տոներին: Այս կանոններում ընկալված են կիրառի օրերին պատշաճեցվող, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերին մարտիրոսաց տոներ կարգելու, Քրիստոսի Մուսուղի ու Չարապետի շրջանում միասին՝ հունվարի 6-ին տոնելու եւ այլ հարցեր: Իսկ վերջին ընդարձակ կանոնը խստով հարգելի էր և անուսուցելի էր անարժանների ձեռնադրությունը:

Մեծ կարեւորություն է արժեք ունեւ Յովհան Մանդակունու հայրապետության շրջանում կազմված ծիսական գրքերը: Սահակ Պարթեպի ու Մեսրոպ Մաշտոցի ծիսական կարգադրությունները դեռեւս հաստատուն գործածություն չէին ստացել, քանի որ Յովսեփ Յողոցմեցի եւ Գլուս Արաւելագի



զաղի Կաթողիկոսներն այդ խնդիրներով զբաղվելու հնարավորություն չէին ունեցել: Երկրում խաղաղության հաստատումից հետո Յովհան Մանդակունին ձեռնարկում է այս գործը՝ լրացնելով պակասը եւ շտկելով թերությունները: Չարապետը փորձում է առավել ամբողջական կատարյալ դարձնել ծիսական կարգերը: Ժամագրքում ուղղակիորեն Յովհան Մանդակունին են վերագրվում գիշերային ծամերգության «Չարթուցեալս» բարոգը եւ «Չքեն գոհանամ» արղթը (տե՛ս **Մաղաքիա արք. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 478**), ճաշու երրորդ, վեցերորդ եւ իններորդ ծամերի աղուհացից մեծ բարոգներն ու աղթքները (տե՛ս «Կիրակոսի վարդապետի Գանձակեցույ Չամասուս պատմություն», Կենտրոն, 1865, էջ 20): Ծարականներից «Յովհաննեսի» համբարձին՝ վերագրվում է Յովհաննես Կաթողիկոսին, սակայն Մանդակունի, թե՛ Օմեցունի՝ հայտնի է: Չնայած այս անորոշությանը, կարծում ենք, որ Յովհան Մանդակունին կարելու դերակատարում ունի այս գործում, քանի որ նրա կաթողիկոսությունից առաջ ընկած ժամանակահատվածի համար պատմական աղբյուրները վկայում են միայն սաղմոսների երգեցողության մասին:

Ծիարանի կանոններից նրան են վերագրվում Մկրտության ու Դրոշմ կարգը, սարկավագի, քահանայի եւ եպիսկոպոսի ձեռնադրության կարգը, եկեղեցու հիմնադրվելի, խաչօրհներգի, ժամահարի, սկիհի, մարգարայի ու գրքի օրհնության կարգերը, Պսակի, Ապաշխարության կանոնները:

Պատարագամատուցի թարգմանության մեջ, ըստ Երեսույթին, Յովհան Մանդակունին եւս նկատելի ներդրում ունի. Ասողիկ պատմիչի վկայությամբ՝ Չարապետին է վերագրվում «Աթանասի պատարագամատուցի» թարգմանությունը:

## ՅՈՎՀԱՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՈՒՆ ԿԵՐԱԳՐՎՈՂ ԾԱՌԵՐԸ

«...Չարապետը բարձր ուղղության կատարեաց. զբարոգ գիշերի եւ տուրքեան, զկարգս մկրտության, զարկաւագի, զքահանայի եւ գեպիսկոպոսի եւ գործության եկեղեցու եւ գլխովիմբ գաւառարագամատուց, գոր Աթանասի ասեւ լինել»:

Իսկ Վարդան Արեւելցիի իր աշխատության մեջ գրել է. «...յօրինեաց զկարգս ձեռնադրության եւ զճաշ խրատուց», ապա հավելել՝ «...սա թարգմանեաց գերկորորդ Կորնելացոց թուղթն եւ զՅոհանն» («Չամարումն Պատմության Վարդանայ վարդապետի», Կենտրոն, 1862, էջ 55): Չենք կարծում, որ Սահակ Պարթեպից ու Մեսրոպ Մաշտոցից հետո Սուրբ Գրքի որեւէ մասի թարգմանություն թերի մնացած լինել, ուստի կարելի է ենթադրել, որ երկրորդական գրքերից Կորնելացիների Գ թուղթը եւ «Յովհաննես անտարակի հանգիստ»-ն են Յովհան Մանդակունի Կաթողիկոսի թարգմանած հատվածները:

Յովհան Մանդակունու մատենագրական ժառանգությունն արտացոլում է նրա աստվածաբանական հայացքներն ու վարդապետությունը:

Նրա անունով մեզ է հասել նաեւ քսանվեց ճառ («Տեսնո Յովհաննու Մանդակունու Չարապետի ճառք», ի Կենտրոն, 1860), որոնց հեղինակության հարցը մինչ օրս վիճելի է, քանի որ գրիչներից ոմանք այդ նույն ճառերը մակագրել են տարբեր հեղինակների անուններով: Այս ճառերի գրման մասին իր երկուն հիշատակություն ունի Յովհաննես Դրասխանակերտցի. «Եւ գլխի նորա (Գլուս Կաթողիկոսից հետո) յաջորդէ զաթոռ հայրապետության Յոհան Մանդակունի, որ առջեւալ իսկ էր ամենայն հոգեւոր հանձնարվ. եւ կարգս յօրինեալ ճոխացուցանէ պայծառապէս զամենայն աղօթական ծամակարգութիւնս եկեղեցույ սրբոյ. եւ յարդար էս ճառս զգուշացուցիչ դիտարկական կենցաղոյ, որ բերէ զզգուշ փրկութիւն» («Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտցույ Պատմություն Չարապետի», Թիֆլիս, 1912, էջ 60-61): Չարապետների եզրակացմամբ՝ այս վկայությունը վերաբերում է ձեռագրերում պահպանված «Խրատ վարուց» ժողովածուին, թե՛ն Ասողիկի հաղորդած տեղեկության համաձայն՝ այդ երկի, ինչպէս նաեւ «Չամարամատուց» եւ «Նոյեմակ» գործերի հեղինակը հայտնի վարդապետ Յովհան Մայրագուցեցի է (մոտ 572-650 թթ.): Միջնադարում, հավանաբար, տեղի է ունեցել նույն անունը կրող Մանդակունու եւ Մայրագուցեցու երկերի շփոթ, առանձին դեպքերում նաեւ՝ քնագրական ընդմիջարկություն, ուստի այսօր դժվար է հաստատապէս տարանջատել այս երկու հեղինակների երկերը:

Բարսեղ վարդապետ Սարգիսյանը հանգամանալիք ընկալելով փաստում է, որ այս ճառերը պատկանում են Յովհան Մանդակունու գրչին (տե՛ս «Քննարկատու Յովհան Մանդակունու եւ իր երկասիրության վրայ», Կենտրոն, 1895): Յեղիակը հիմնավորում է, որ այդ ճառերը հայ հեռուներ է գրել, այլ ոչ թե Յովհան Ոսկեբերանը, Եփրեմ Ասորիի կամ որեւէ օտար այլ հեղինակ: Բարսեղ վրդ. Սարգիսյանը ներկայացնում է իր տեսակետը հիմնավորող ու ամրապնդող արտաքին մի շարք վկայություններ եւ ճառերի ներքին ընկալությունից բխող փաստարկներ:

Նշանավոր հայագետ-աստվածաբան Կարապետ Տեր-Մկրտչյանը մերժում է Բարսեղ վարդապետի դրույթները եւ փորձում պայացուցել, որ քսանվեց ճառ բովանդակող ժողովածուն Յովհան Մայրագուցեցու է պատկանում: Յովհան Մայրագուցեցու հեղինակության կողմնակիցներից է նաեւ Դ. Զեղդերյանը, որը եւս իր տեսակետը հիմնավորող կոչանքներ է բերում:

Ճառերի հեղինակային պատկանելության խնդրի վերջնական լուծման համար անհրաժեշտ են լրացուցիչ անհերքելի տվյալներ ու փաստեր, որպիսիք դեռեւս չկան: Յովհան Մանդակունու հեղինակության օգուտն խոսող եւական փաստերից է այն, որ Մաշտոց-Ժիսարանի եւ ճառերի ժողովածուի միջեւ կա նկատելի փոխանջություն:

Այս ճառերը ձեռագրերում պահպանված են առանձին-առանձին կամ փոքրիկ խմբերով, սակայն կան նաեւ ձեռագրեր, որոնցում դրանք ամբողջությամբ են ներկայացված: Տարբեր ձեռագրերում սովորաբար տարբեր են նաեւ ճառերի երթուղականությունն ու դասավորությունը (տե՛ս **Լեւոն Տեր-Ներսիսյան, Դասեր հայ եկեղեցական մատենագրությունից, Սոփի, 1993, էջ 43**): Ճառերի ժողովածուի երկու հրատարակությունները (Կենտրոն, 1836, 1860) իրականացվել են Կենտրոնի հնագույն երկրագագիր օրինակի (Թ. 209, ԺԱ-ԺԲ դդ.) հիման վրա:

Յովհան Մանդակունուն վերագրվող ճառերի ժողովածուն գրական արժեքավոր հուշարձան է եւ մեծապէս ազդել է հետագա դարերի հայ ճառագրության վրա: Ճառերը հիմնականում բարոյախրատական բնույթ ունեն եւ ուղեցույց են քրիստոնյաների համար. դրանք վերաբերում են մեղքերի խոստովանությանը, վնասակար բարքերին ու սովորություններին, հիշաշարությունը, երգվելու չար սովորությանը, պահիքն, ողորմածությանը, աղքատների միջթարությանը եւ այլն:

Շարունակել...  
Արփին ՉԱՆՔԻՅԱՆ

## ՄԵԾ ՆԱԿԱՏԱՔՆԱԻՉԸ. ԱՍՏՎԱԾՄԱՐԴ ԵՎ ՄԱՐԴԱՍՏՎԱԾ

Սկիզբ՝ էջ 5

Եթե՛ համաշխարհային կյանքը գերագույն Իմաստ չունի, եթե՛ չկան Աստված եւ անմահություն, ապա մնում է երկրային մարդկության կազմակերպումը՝ ըստ Շիգալովի եւ Մեծ Չավատաբանի: Աստուծո դեմ ուղղված ըմբոսությունն անխուսափելիորեն պետք է հանգեցնի ազատության ոչնչացմանը: Հեղափոխությունը, որի հիմքում ընկած է աթեիզմը, անխուսափելիորեն պետք է հանգեցնի անսահման բռնակալության: Այդ նույն սկզբունքն ընկած է կաթողիկյան հավատաբանության եւ հակադիր սոցիալիզմի հիմքերում, այդ նույն անհավատությունը՝ ազատության ոգու, Աստուծո եւ մարդու, Աստվածամարդու եւ Աստվածամարդկության հանդեպ: Եվրոնախոյզի հայեցակետն անխուսափելիորեն թշնամի է ազատությանը: Մարդկային ոգու ազատությունն անհամատեղելի է մարդկանց երջանկության հետ: Ազատությունն արիստոկրատական է, այն գոյություն ունի միայն սակավաթիվ ընտրյալների համար: Եվ Մեծ Չավատաբանիցը Քրիստոսին մեղադրում է այն բանում, որ Նա, մարդկանց ծանրաբեռնելով նրանց ուժերից վեր ազատությամբ, դա կատարեց, ասես, Նրանց չսիրելով: Մարդկանց հանդեպ սիրուց ելնելով՝ պետք էր նրանց զրկել ազատությունից: «Մարդկանց ազատության վրա բռնակալու փոխարեն՝ Դու էլ ավելի մեծ ազատություն տվիր նրանք: Թե՛ Դու մոռացար, որ մարդու համար հանգստությունը, անգամ մահը, ավելի թանկ է, քան բարությունը: Եւ չարի իմացության ազատ ընտրությունը: Մարդու համար չկա ավելի գայթակղիչ բան, քան նրա խղճի ազատությունը, բայց չկա նաեւ ավելի տանջալի բան: Եվ ասի մարդկային խիղճը մեղքնալիք տանջալիքն ու համար, ամար հիմքեր տալու փոխարեն, Դու վերցրեցիր այն ամենը, ինչն արտակարգ է, անեղծվածային եւ անորոշ,

այն ամենը, ինչը վեր է մարդկային ուժերից, դրա համար էլ այնպես վարվեցիր, որ կարծես բոլորովին չէիր սիրում նրանց»: Մարդկանց երջանկության համար անհրաժեշտ է հանգստացնել նրանց խիղճը, այսինքն՝ նրանցից եւ վերցնել ընտրության ազատությունը: Միայն քչերն են ի վիճակի տանելու ազատության լուծը եւ հետևելու նրան, Ով «մարդու ազատ սերը կամեցավ»:

Մեծ Չավատաբանիցն այրվում է ծովի ավազի չափ անհաշիվ այն շատերի համար, ովքեր չեն կարող տանել ազատության փորձությունը: Մեծ Չավատաբանիցն ասում է. «Մարդն այնքան Աստուծոն չի փնտրում, որքան փնտրում է հրաշքները»: Այս խոսքերում արտահայտված են մարդկային բնության մասին Մեծ Չավատաբանիցի ստոր կարծիքը, անհավատությունը մարդու հանդեպ:

Շարունակություն՝ էջ 8



# ԵՐԵՎՈՒՅԹ, ՈՐ ԱՐԺԱՆԻ ԷՐ ՀԱՏՈՒԿ ՈՒՇԱԳՐՈՒԹՅԱՆ



Սկզբը՝ էջ 6

1964 թվականին, այսինքն՝ ինստիտուտն ավարտելու տարում ստեղծած նրա գործերը՝ «Եղիշ Զարեց» (երկու տարբերակ), «Սայաթ-Նովա», «Հայուհի», «Եշերով նախորդորտ», «Թեյնիկով նախորդորտ» եւ այլն, աներկայորեն հաստատեցին, իր 60-ական թվականների հայ կերպարվեստի փառահեղ անդամակցում իր ուրույն տեղն զբաղեցնելու հայտնի է ներկայացրել են մի քանի քաղաքաշատ ու անկրկնելի նկարիչ, ում ասելիքը ձեռքի ու բուլակաղության առումով զարմանալի ներդաշնակ ու համահունչ էր իր ժամանակի եւ գալիք ժամանակների ոգուն ու մտայնությանը, իր ժամանակակիցների ու ժամանակներից դուրս ապրող անհատականությունների բարոյապատկերական լիցքերին:

Շատ նկարիչներ են պատկերել մեծ Զարեցին, բայց այն Զարեցը, ում զգացել, ընկալել ու պատկերել է Վրույրը, հա-



Սկզբը՝ էջ 7

Եվ նա շարունակում է մեղադրել Բրիստոսին. «Դու խաչից չիջար ... որովհետեւ չուզեցիր հրաշքով ստրկացնել մարդուն եւ տեսնեցիր ազատ հավատի, այլ ոչ հրաշքի վրա հիմնված հավատի մասին: Ազատ սեր տեսնեցիր, այլ ոչ թե անազատ մարդու ստրկական հիացմունքն այն գործության առջեւ, որը մեկընդմիջ ահաբեկում է նրան:

Բայց այստեղ են Դու չափազանց բարձր գնահատեցիր մարդկանց, բանգի նրանք, անշուշտ, ստրուկներ են, թեւեւ ստեղծված են ըմբոստների կողմից»: «Այնպես հարգելով հանդերձ (մարդուն)՝ Դու այնպես վարվեցիր, որ կարծես այլես

մեմատության եզրեր չի պահանջում. Վրույրի Զարեցն իր ժամանակի մեծածին զաղափարախոսության ու բարոյապատկերական մթնոլորտի մարտահրավերը նետած աննկուն «գորավար» է: «Երկիր Նաիրի», «Հանքեական առասպելի», «Ամբոխները խելագարված» տառապանքների, մահերի ու մորիկների միջով անցած ըմբոստ մի այր է, ում ոչ թե շուրթերից, այլ աչքերից են ասես հնչում.

«Եվ երբ արեւը բարձրացավ երկինք, եվ մեք լույսի տակ իրարու գտանք - Մեռելների պես սիրթած էինք, Չէինք հավատում, որ ապրում ենք, կանք. Անխոս հայացքով իրար թաղեցինք, Իրար հոգու մեջ գերեզման մտանք»:

Ոչ ոք ավելի լավ, քան Վրույրը, չէր կարող զգալ ստեղծագործ անհատի, նրա տիեզերական անդադարի զարկերակի ռիթմը, չէր կարող ապրել բզկված հոգու ցավը, չէր այդ ցավից ծնված ճիչն ու դառնալ այդ ամենի շանթարգելը՝ իր վրա ընդցնելով տարածության մեջ ձգվող մարդկային տառապանքի անշեղ թուրան: Ոչ միայն Զարեցը, այլև նրա պատկերած մնացյալ ստեղծագործ անհատները՝ Սայաթ-Նովան, Տերյանը, Սարգսյանը, Ե. Ջեյլարը, Իսահակյանը, Խանգուդյանը, Դոն Քիշոտը՝ որպես Մերվանտեսի գրական արտահայտություն, անցել են վրոյրական նույն հոգեվերլուծական պրոցեսների միջով, անցել ֆիզիկայի ու մետաֆիզիկայի բոլոր օրենքներով ու ինչ-որ տեղ մնացել օրենքից դուրս: Սա ոչ միայն նրանց, այլև հենց Վրույր Չալստյանի աշխարհագրագրությունն է, նրա՝ իր նմանի պարունակների ու մոդուլների գեղանկարչական մարմնավորումները: Վրույր Չալստյանի արվեստի գիտակ Զ. Իգիթյանը, հնարավոր է, հենց նկարչի դիմանկարներն է ի նկատի ունեցել, երբ գրում էր. «Վրույր Չալստյանի գործերը գերծ են էֆեկտներից եւ արտաքին գրավիչ տարրերով: Դա մի աշխարհ է, ուր պրոցեսները ծագում են ոչ թե թուլությունից, այլ ուժի գերառատությունից...»:


Իսկապես, Վրույրի անձնական ու ստեղծագործական խնդիրները մշտապես ծագել են իր ներքին անսահման ուժի ավելցուկից: Չալստյան նկարչի զարմանալի բազմաբանգ ու բազմակույս հոգեւոր աշխարհի, նրա աշխարհագրագրության՝ հաճախ անըմբռնելի ենթաշերտերի մարմնացումներ են նաեւ տարբեր տարիների ինքնադիմանկարները: Եթե փորձենք մտովի կոդը կոդիչ շարել նկարչի ինքնադիմանկարները՝ ճիշտ այնպես, ինչպես արվեստը նրա անհատական առաջին ցուցադրության ժամանակ, ապա ավելի պարզորոշ կտեսնենք նկարչի սեփական աշխարհը, այդ աշխարհի ու տիեզերականի այն անբախտելի հոգեւոր ու նաեւ կենսաբանական մերձավորության սահմանները, ձգողականու-

թյան այն հայտնի եւ անհայտ ուժի գերակայը, որ մարդուն ուղեկցում է կյանքից մինչեւ մահ եւ հակառակը: Դրանք նույն անհատի, նույն էակի, նույն միավորի մասնատված աշխարհների ի մի բերումն են ժամանակի ու տարածության մեջ: Նկարիչն ասես իրենով ու իր անհատականության, իր անձի միջոցով է փորձում պատասխանել գիտակցության եւ ենթագիտակցության առաջադրած հարցերին. արդյոք մենք ճանաչում ենք մեզ, արդյոք ամբողջական ենք, արդյոք մեր երկփեղկվածության մեջ սաղմնային ու հետմահու անհայտները չեն, որ աղաղակում են, արդյոք մեր աշխարհի ու տարաշխարհների միջեւ եղած կամուրջների փուլզոհ՝ մը չէ մեր հոգեկան ցավի, ողբերգության



թուն պատճառը: Նայե՛ք Վրույրի ինքնադիմանկարները, զննե՛ք եւ կգտնե՛ք ձեր հարցերի շատ պատասխաններ, որոնց լավագույն լրացումները թաքնված են նաեւ նրա կոմպոզիցիոն գործերում:

Արվեստաբանական միտքը շատ է սիրում եզրեր ու եզրույթներ, կառուցվածքներ ու գունաթույրեր, շատ է սիրում խուսել լույսի ու սուղերի մասին: Ես ցանկություն ունեմ այդ մասին խոսելու, բանգի չկա ճշմարիտ նկարիչ, որ այդ խնդիրները նախապես լուծած չլինի. Վրույր Չալստյանի համար այդ խնդիրները լուծվել էին դեռեւս ուսումնառատում ուսանելու տարիների: Վկան նրա դիպլոմային աշխատանքը: Սակայն դրանք քիչ, շատ քիչ էին Վրույր նկարչի համար. նրա միտքը, հոգին



դեգերումների մեջ էին ոչ թե իր աշխարհընկալման կերպերը, գեղանկարչական ձեւերը գտնելու համար, այլ՝ վաճառ իր ընկալումների եւ տիեզերականի տարածական հայտերի փիլիսոփայական դրսեւորումների, տիեզերքի ու մարդ արարածի հարաբերումների եզրագծերի, դրանց ներքին ու արտաքին փոխկապի, այդ փոխկապից ծնված հոգեկան, հոգեբանական ու ֆիզիկական ձգողականության հետեւանքների պատճառի ու պայմանականության խնդրի վեր հանման («Մոդուլներ» շարքը, «Գիշեր», «Հանելուկ», «Լույս», «Թռչող ձկներ»):

Չայ կերպարվեստում ոչ մի նկարչի ստեղծագործություն այնքան ներթափանցված չէ տիեզերական կեցության ու մարդու մտածողության, մարդու՝ իրեն ու իրենից դուրս աշխարհները ճանաչելու փնտրուղներով ու հարցադրումներով, որքան Վրույր Չալստյանին: Նա անվերջ փորձում էր գտնել մարդուն եւ տիեզերքի միջեւ ընկած «կամուրջները»՝ մարդու ողբերգական ճակատագրի իրական պատճառներն այդ կամուրջներից անդին փնտրելով:

Նա, հիրավի, մեծ փիլիսոփա էր, ով իր մտքերը շարադրում էր գույների ու գծերի, հորինվածքների ու պատկերների անկրկնելի լեզվով:

Աստղիկ ՍՏԱՐՈՆԻԱՆ



## ՄԵԾ ՀԱՎԱՏԱՔՆՆԻՉԸ. ԱՍՏՎԱԾԱՄԱՐԴ ԵՎ ՄԱՐԴԱՄԱՏՎԱԾ

Սկզբը՝ էջ 7

Եվ նա շարունակում է մեղադրել Բրիստոսին. «Դու խաչից չիջար ... որովհետեւ չուզեցիր հրաշքով ստրկացնել մարդուն եւ տեսնեցիր ազատ հավատի, այլ ոչ հրաշքի վրա հիմնված հավատի մասին: Ազատ սեր տեսնեցիր, այլ ոչ թե անազատ մարդու ստրկական հիացմունքն այն գործության առջեւ, որը մեկընդմիջ ահաբեկում է նրան:

Բայց այստեղ են Դու չափազանց բարձր գնահատեցիր մարդկանց, բանգի նրանք, անշուշտ, ստրուկներ են, թեւեւ ստեղծված են ըմբոստների կողմից»: «Այնպես հարգելով հանդերձ (մարդուն)՝ Դու այնպես վարվեցիր, որ կարծես այլես

չէիր կարելցում նրան, որովհետեւ չափազանց շատ էիր պահանջում նրանից ...

Նվազ հարգելով մարդուն՝ նվազ էլ կպահանջեիր նրանից, եւ դա ավելի նման կլիներ սիրո, որովհետեւ ավելի թեթեւ կլինեւ մարդու բեռը: Նա տկար է եւ անաբա: Մեծ Հավատաքննիչին վրոյրվեցնում է Բրիստոսի կրոնի արիստոկրատիզմը: «Դու կարող ես հպարտությամբ մատնացույց անել ազատության եւ ազատ սիրո այդ զավակներին, նրանց ազատ ու հոյակապ գոհաբերությունը հանուն Էթե: Բայց հիշիր, որ նրանք ընդամենը մի քանի հազար էին, այն էլ՝ խլկն աստվածների, իսկ մնացյալները՝ Ի՛նչ մեղք ունեն մնացյալ տկար մարդիկ, եթե չեն կարողացել կրել

այն, ինչ կրել են հզորները: Ի՛նչ մեղք ունի տկար հոգին, որ ի գործ է այդքան սուկայի շնորհներ ընդունելու իր մեջ: Եվ Դու մի՞թե իրոք եկել էիր լոկ ընտրյալների մոտ եւ ընտրյալների համար: Եվ ահա Մեծ Հավատաքննիչը պաշտպան է կանգնում թույլ մարդկությանը, հանուն մարդու հաղթեալ սիրո՝ նրանցից ետ է վերցնում տառապանքներով ծանրաբեռնող ազատության շնորհը: «Մի՞թե մենք, այդքան խոնարհաբար գիտակցելով մարդկության տկարությունը, սիրով թեթեւացնելով նրա բեռը, չենք սիրում նրան»:

Շարունակելի  
Ուսերները թարգմ.  
Գեորգ եպս ՄԱՐԴՆԱՆԸ

## ԲՐԻՍՏՈՆԻԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

Հիմնադիր՝

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինի Հրատարակիչ՝

«Զինատուրայի Հայաստան» թերթի խմբագրություն

Գլխավոր խմբագիր՝

Աստղիկ Մամուրջյան

Գրանցման վկայական՝ 624

Խմբագրության հասցեն՝

Մայր Աթոռ Սբ Էջմիածին

Հեռախոս՝ 517197

Էլ. փոստ՝ gh@etchmiadzin.am  
astghikstam@gmail.com

web կայք՝  
kh-tert.livejournal.com  
krishayas.wordpress.com

Մտրո. տպագր. 3.3.2015 թ.  
Տպագրականը՝ 2100  
Գինը՝ 50 դրամ